

մկների
իրան-
վերա-

ՆԵՐ

զական
բերը և
ն ստա-
րադա-

կան սե-
գերի-
գապե-
սուել է
սըարզը
ն, որը
բեղայի
ողական
ապետի
իմեւած
տը ան-

լու-
առա-
յանն
խնու-
խնու-
յացեն

ուրիւ-
կնցիկ-
չբաւոր
ութեան
նակա-
խտամի-
ւում են
ններս

տըւած
ուլ

անոււմ
սկսել

Մերթի
պատե-
րազմի

հիւ-
ազա-
րի մի
ի շա-
նելու
բննր
արին,
րանի
եանն-
ընդ-
մադ-
ակն է
րին և
իւնը
ուու-
իւն-
աղու-
թու-
իւր-

քաց

հա-
նըլը
զակ-
կա-
ւնն-

ՊԱՐԻՉ.—Մեծ Իշխան Նիկոլայ Նի-
կոլաևիչը այցելեց նախագահին Ելի-
սեան պալատում: Այցելութիւնը շա-
բունակեց քառոր ժամ: Շուտով
Ֆալիէրը փոխայցելութիւն տուց:

ԲԵՆԻԼԻՆ.—Երեկոյան կայացան 27
սոցիալ-դեմոկրատական կանանց ըն-
կերութիւնների ժողովներ՝ ներքած
ապրուստի թանգութեան հարցին: Ճա-
նախօսները մատնանշում էին, որ
թանգութիւնը անտանելի է ազգա-
բնակութեան չքաւոր դասակարգերի
համար, աւելանում է երեխաների մա-
հացութիւնը: Նրանք պահանջում են,
որ սահմանները բացեն մի ներմուծ-
ման համար, և մուկիցիպալիտետները
վաճառեն ազգաբնակութեան միս սե-
փական գնով:

ՎԷՆԵԱ.—Հունգարական զինվորացի-
յի զինուորական յանձնաժողովում
զինուորական միւնիստրը ընդգծեց,
որ զինուորական վարչութիւնը, համա-
կերպելով երկրի ֆինանսական դրու-
թեան և պետական կարիքներին, սահ-
մանափակել է իր պահանջները երկու
կառավարութիւնների կողմից մշակած
ծրագրի ճիշտ սահմաններով: Նաւա-
տորմի զխաւորը սաց, որ նորմալ
բիւզնէի նախատեսւած աւելացումը չի
համապատասխանում ժողովին վար-
չութեան կարիքներին մասնաւոր քիչ
է նաւաշինութեան գումարը: Նա իր
ճառը վերջացրեց հետեւեալ խօսքերով.
Աւատար-Հունգարիային հարկաւոր է
մի բաւականի ուժեղ, նաւատորմ ա-
փերը պաշտպանելու համար: Այդ նպա-
տակից մենք դժբախտաբար դեռ շատ
կենք հետու:

Բոլոր պետութիւնները, նոյն իսկ ա-
մենափոքրերը, ցոյց են տալիս ուժեղ
գործունէութիւն իրենց ժողովին ոյժե-
րը աւելացնելու նկատմամբ: Այդ բա-
նը պէտք է զիջիլ հանդիսանայ
Աւատար-Հունգարիայի համար աւելի
արագ քայլելու այն ճանապարհով, որի
վրայ նա արդէն կանգնել է:

ԲԱՐՍԵԼՈՆԱ.—Կատալոնիայում ընդ-
հանուր երկաթուղային գործադուլ է:
Երթեկները դադարել է: Եղել են
Մարտտաժի դէպքեր: Իշխանութիւնը
սպառնալից օգնութեամբ աշխատում
է վերականգնել մասնակի երթեկնու-
թիւնը:

Մ Ա Մ ՈՒ Լ

Հայ տպագրութեան 400-ամեակն ու
տառերի գիւտի 1500 ամեակը «Մշա-
կը» դարձրել է մի առիթ առաջ տա-
նելու իր հակակրանքն ու հաւածանքը
դէպի այս ու այն անձնաւորութիւն-
ներն ու հիմնարկութիւնները: Համազ-
գային Մեծ Տօնն անգամ չէ կարող
գէթ ժամանակաւորապէս յիտ պահել
«Մշակին» իր այդ վատ սովորութիւ-
նից: Որքան կուզես գլխը, հերքելի,
փաստերով ապացուցիր թէ այդ այդ
պէս չէ, այդ միևնույն է, նա շարու-
նակելու է հասարակութիւնը մոլորե-
ցնելու:

Այսօր երբ այդ խնդրի շուրջը համա-
ձայնութեան որոշ քայլեր են նկատ-
ւում, երբ էլ միաձայն յորելեանական
յանձնախումբը արամադիր է, թէ և
ոչ պաշտօնական ձևով, իր իսկ
ձևերով ստեղծած կնճիղը վերաց-
ցնել ու ընդհանուր ուժերով, հա-
սարակութեան բոլոր խաւերի մաս-
նակցութեամբ պատշաճաւոր ձևով
կատարելու ազգային այդ Մեծ Տօնը, սա-
կայն «Մշակը» նորից հրապարակ է եկել
պղտորելու հասարակութեան տրամա-
գրութիւնն ու նորից պատակտելու այդ
ցանկալի համաձայնութիւնը:

Փաստերը ցոյց են տալիս—զը-
րում է «Մշակը»—որ հասարակա-
կան կարծիքը մինչև այս րոպէին
յօգուտ էլ միաձայն որոշման է եղել
և ոչ մի հակառակ տրամադրութիւն
հոգի: 13-ի տօնախմբութեան՝ չէ ար-
տայայտել:

«Մշակը» այս տողերով ուզում է
էլ միաձայն համոզել, թէ հասարակու-
թիւնը հետք է, շարունակիք քո ճա-
նապարհը և գործիք ինչպէս ծրա-
գրել ես. աւելի որոշ՝ թիֆլիզի

յորելեանական յանձնախմբի հետ յա-
րաբերութիւնների մէջ մտնելն Ազգա-
յին Մեծ Տօնը միացեալ ուժերով տօ-
նելու՝ աւելորդ է, քանի որ հասարա-
կական կարծիքը մինչև այս րոպէին
յօգուտ էլ միաձայն է եղել:

Պարզ է, որ «Մշակը» այս տողերն
անկեղծ չեն և զբաւած են նորից վտան-
գելու երկու յանձնախմբերի մերձեց-
ման ցանկալի փորձը:

«Թիֆլիզի յանձնաժողովը» և
«Հորիզոնը», դիտմամբ զբոււ է նո-
րից «Մշակը»—դարձեալ հասարակա-
կան կարծիքը մոլորեցնելու նպա-
տակով, չեն յիշում, այլ շարունակ
գրում են (լաւ լսեցէք), թէ «Թիֆ-
լիզը, Բագուս, Կ. Պոլսը որչափ են
տօնել նոյնմբերի 26-ին և գրական
ֆօնդ հիմնել, «Միւսն այսօր ոչ
թիֆլիզը, ոչ Բագուս, ոչ Կ. Պոլսը
որեւ այլպիսի որոշում չեն արել...»

Կարճ էք երևակայել ընթերցող,
թէ ինչ աստիճանի տպագրական խօսա-
քը «Մշակի» համար պիտի կորցրած
լինի իր արժէքը, որպէս զի այդպիսի
ստույթիւն զրուի. իբր թէ «Թիֆլիզը չէ
որոշել տօնել նոյնմբ. 26-ին և ոչ էլ գրակ-
ֆօնդ հիմնելը առաջարկում: Ուրեմն
ի՞նչ է թիֆլիզն էլ չէ որոշել, էլ ինչ՞ու
համար են այսքան ազմուկները. էլ
ինչ՞ու համար է «Մշակը» քամէլիտօնի
գոյնիք ընդունում, անհանգստանում,
իր երկկողմի սասածն այսօր քննում:

Սակայն փաստերով խօսենք.
«Թիֆլիզի Յանձնաժողովի որոշման»,
այն է՝ տօնը կատարել նոյնմբերի 26-
ին և հիմնել գրական ֆօնդ.—ձայնակ-
ցել են:

1) Հայկական Բ. Ընդհանուր Միու-
թիւնը (որի կովկասեան ներկայացու-
ցիչն է Մ. Առաքելեան) իր պաշտօնա-
կան «Միութիւն» թերթում գրում է.

«Հայ տպագրութեան 400 ամեայ
Յօրելեանի Տիֆլիսի գործադիր
Յանձնախումբը նամակ մը ուղղելով
Կենդ. Ժողովին՝ կառաջարկէ որ
համայն Հայութիւնը այդ ազգային
նոյնակալ հանդիսութիւնը տօնէ
ամեն տեղ միաժամանակ: Արգարև
դիտելի է թէ շատ մը համայնքներ
և խմբակցութիւններ տարբեր օրեր
որոշած են այդ տօնին համար: Մինչ-
դեռ Յօրելեանի վեհութիւնը կը
պահանջէ որ ազգը միաժամանակ
արտայայտուի Կենդ. Վարչ. Ժողովը
այդ նկատմամբ Միութեան Տեղա-
կան Մասնաժողովները կը հրապար-
կանային որ իրենց շրջանա-
կին մէջ Հայ Տպագրութեան յորե-
լեանը տօնի նոյնմբերի 26-ին
հայկական տառերի գիւտի օրը»:

2) Վասպուրականի Տպագրու-
թեան Յօրելեանի մնայուն Յանձնա-
խումբը, որի «Նոյնը» տպեց «Հորիզո-
նի» № 199:

3) Բագուի յանձնախումբը լինելով
«Թիֆլիզի և էլ միաձայն յորելեանական
յանձնախմբերից առաջ կազմած» չէր
կարող յարած լինէր դրանցից և որ և է
մէկին, սակայն նա որոշել էր տօնը
կատարել նոյնմբերին (ոչ թէ 26-ին),
իսկ դրամի գործադրութիւնը «Թիֆլի-
զի յանձնախմբի հետ միասին կարգա-
դրել»:

4) Կ. Պոլսի կենտրոնական վարչ-
իք ձայնը յանձնաբարել է «Թիֆլիզի
Յանձնաժողովին որպէս իր կազմից
ներկայացուցի:

Էլ միաձայն զէմ են արտայայտուի
կովկասեան մամուլի մեծամասնու-
թիւնը՝ «Հորիզոն», «Արարազ», «Եղ-
ուս», «Արագած», «ԲԱԿՄ»:

Ներկայումս էլ ամեն կողմից սկսել
են զիմուկներ, որ էլ միաձայն ու «Թիֆ-
լիզի Յանձնախմբերը համաձայնու-
թեան գան, ինչպէս օրինակ Բագուի
ընդհանուր ժողովը ցանկութեան է
յայտնել, Ախալքալաքի յորելեանա-
կան Յանձնախումբը (տես «Հորիզոն»
№ 188), Վասպուրականի հասարակու-
թիւնը և շատ անհատներ: Այժմ մը
մնաց թէ հասարակաց կարծիքը յօ-
գուտ էլ միաձայն է՝ կամ թէ չի եղել
և ոչ մի խմբակցութիւն, որ ցանկա-
ւար տօնը կատարել նոյնմբ. 26-ին և
հիմնել գրական ֆօնդ:

Սակայն տպագրիւն է «Մշակը» մի
բան համոզել:

— Горбатаго могола неуразито.